



Արմենիա  
Ինչուրանս

«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ»  
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ  
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍԴԸ Գլխավոր տնօրենի  
«14» մայիսի 2026 թ. թիվ 175-26L հրամանով

# ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԻՑ ԲԽՈՂ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՎՈՐ (ԱՊԿԱ) ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

## Ապահովադիր

*Ապահովադիր* կարող է հանդիսանալ ավտոտրանսպորտային միջոցի սեփականատեր հանդիսացող կամ իրավական այլ հիմքով ավտոտրանսպորտային միջոցի տիրապետման, տնօրինման, օգտագործման (շահագործման) իրավունք ունեցող ֆիզիկական կամ իրավաբանական անձը:

## Փոխհատուցում ստացող անձ

*Փոխհատուցում ստացող անձ* է հանդիսանում՝

ա) ֆիզիկական անձն, ում կյանքին, առողջությանը կամ գույքին պատճառվել է վնաս և ով՝ ճանապարհատրանսպորտային պատահարի (ՃՏՊ) հետևանքով պատճառված վնասների արդյունքում, օրենքով և այլ իրավական ակտերով ունի փոխհատուցման պահանջի իրավունք:

բ) իրավաբանական անձը, որի գույքին պատճառվել է վնաս և որը ՃՏՊ-ի հետևանքով պատճառված վնասի արդյունքում օրենքով և այլ իրավական ակտերով ունի փոխհատուցման պահանջի իրավունք:

### **Ապահովագրության օբյեկտ**

Սույն ծրագրով կարող է ապահովագրվել «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ-ում ԱՊՊԱ պայմանագիր ունեցող թեթև մարդատար ավտոտրանսպորտային միջոցի (որը չի շահագործվում որպես տաքսի, երթուղային տաքսի կամ հանրային տրանսպորտ) սեփականատիրոջ պատասխանատվությունը, որն առաջանում է ապահովագրության պայմանագրում նշված տարածքում այդ ավտոտրանսպորտային միջոցի շահագործման ժամանակ երրորդ անձանց կյանքին, առողջությանը և գույքին պատճառված վնասի արդյունքում:

### **Ապահովագրական պատահարներ**

*Ապահովագրական պատահար* է համարվում Ապահովագրի կողմից ապահովագրության պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում ապահովագրության պայմանագրում նշված ավտոտրանսպորտային միջոցի շահագործման հետևանքով տեղի ունեցած ՃՏՊ-ի արդյունքում երրորդ անձանց կյանքին, առողջությանը կամ գույքին պատճառված վնասը, որն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հիմք է հանդիսանում տուժած անձանց կողմից վնասի փոխհատուցման պահանջի համար և կապված է միայն՝

- ա) այլ ավտոտրանսպորտային միջոցներ վնասվելու կամ ոչնչանալու հետ,
- բ) այլ ավտոտրանսպորտային միջոցներում գտնվող գույքը վնասվելու կամ ոչնչանալու հետ,
- գ) այլ շարժական կամ անշարժ գույքին բախվելուց կամ ոչնչանալուց առաջացած վնասի հետ,
- դ) ֆիզիկական անձանց մահվան կամ աշխատունակության կորստի հետ:

### **Ապահովագրության տարածք**

*Ապահովագրության տարածք* է հանդիսանում Հայաստանի Հանրապետությունը:

### **Ապահովագրական գումար, ապահովագրավճար**

Ապահովագրավճարը տարբերակվում է՝ ելնելով ապահովագրական գումարի մեծությունից ու ապահովագրության ժամկետից, և հավասար է.

| Ապահովագրական<br>գումար, ՀՀ դրամ | Սակագին, % | Ապահովագրավճար, ՀՀ դրամ                |                             |
|----------------------------------|------------|----------------------------------------|-----------------------------|
|                                  |            | 10 օրից առ 6 ամիս<br>(ներառյալ) ժամկետ | 7 ամսից առ 1 տարի<br>ժամկետ |
| 1 250 000                        | 0,4%       | 3 000                                  | 5 000                       |
| 2 500 000                        | 0,4%       | 6 000                                  | 10 000                      |

### **Ոչ պայմանական չհատուցվող գումար**

Չի կիրառվում

### **Ապահովագրավճարի վճարման կարգ**

**ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԻՑ ԲԵՈՂ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ  
ԿԱՄԱՎՈՐ (ԱՊԿԱ) ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ**

Միանվագ, ապահովագրության պայմանագրի կնքման պահին

**Պահանջվող փաստաթղթեր և տեղեկություններ**

- Ավտոտրանսպորտային միջոցի տեխնիկական անձնագիր կամ հաշվառման հայտարարագիր,
- Ֆիզիկական անձի դեպքում՝ անձը հաստատող փաստաթղթեր
- Իրավաբանական անձի դեպքում՝ պետ գրանցման վկայականը
- Հեռախոսահամար

**Ապահովադրի (վարորդի) գործողությունները պատահար տեղի ունենալու դեպքում՝**

- Չտեղաշարժել ավտոմեքենան,
- Չլքել, չթողներ, չհեռանալ պատահարի վայրից,
- Չընդունել որևէ պատասխանատվություն,
- Տեղի ունեցած պատահարից հետո անհապաղ՝ ոչ ուշ քան 40 րոպեի ընթացքում, Ապահովագրության պայմանագրում նշված հեռախոսահամարներով տեղեկացնել Ապահովագրողին: Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ Ապահովադիրը կամ վարորդը պատահարի արդյունքում գտնվել է անգիտակից վիճակում: Անհնարին դարձնող հանգամանքների վերացման դեպքում Ապահովադիրը կամ վարորդը պարտավոր է անհապաղ՝ ոչ ուշ քան 40 րոպեի ընթացքում, Ապահովագրության պայմանագրում նշված հեռախոսահամարներով տեղեկացնել Ապահովագրողին պատահարի մասին:
- Ապահովագրողն ապահովագրական պատահարի մասին բոլոր անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուն հաջորդող օրվանից հաշվված առավելագույնը 15 աշխատանքային օրվա ընթացքում միանվագ իրականացնում է ապահովագրական հատուցումը:

**Ապահովագրության կանոններ**

«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ-ի «Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության կամավոր ապահովագրության կանոններ»